

Հ Ա Յ Ա Ս Ա Ն

Պարիզի «Le Gaulois» օրաթերթի նոյեմբ. 6-ի համարում տպւած է յայտնի հասարակական գործիչ, ֆրանսիական ակադեմիայի անդամ և Պարիզի պատգամաւոր Դընի կոշենի հետևեալ յօդւածը, որը առաջ ենք բերում ամբողջովին:

Թիւրքերը հաղիւ են յայտարարել պատերազմը և ոռոսական լեգէոնները արդէն իջնում են կովկասի բարձունքներից՝ իրենց առաջից հալածելով թիւրքերին:

Թիւրքերը: Ոմանք երևակայում են տակաւին, որ ամբողջ խալամական աշխարհը ելլորդ քեօշկից մի հատիկ բառի է սպասում ծունկի գալու համար: Այս ցեղը, Մոհամմէդ Բ.-ի օրով, քառասուն եղներով քաշւած, և վենետիկցի մի ուրացողից զնւած, այժմեան կրուպպի նշանաւոր ուրմբածիգների նախատիպը կազմող իր քարածիդ գործիքներով Պոլսի պարիսպները քանդեց: Միևնոյն ցեղը, Մոհամմէդ Բ.-ի թոռան, սուլթան Սելիմի առաջնորդութեամբ Եգիպտոս մտնելով, ստիպեց մարգարէի և խալիֆի ուղղակի յաջորդ Աբբասներին, որ նրանց իրաւունքները զիջեն Սելիմին: Բայց այս յափշտակուած հեղինակութիւնը երբէք չճանաչուեց իսլամ աշխարհից, և Պոլսի սուլթանը ոչ մի ժամանակ հաւատացեալների հրամանատարի ակնածանքը չէր վայելում ամբողջ Հնդկաստանում, Արաբիայում, Եգիպտոսում, Սուդանում և Մարոկկոյում:

Արիւնոռուշտ Արդիւլ-Համիդը փորձեց ձեռք բերել խալիֆների վայելած նախկին յարգանքը, բայց միայն Վիլհելմ Բ.-ին էր, որ յաջողեց խարել: Ժ.Թ. դարը վերջացաւ ամբողջ քաղաքակիրթ Եւրոպայի աղաղակներով, բացի Գերմանիանից, որովհետև մի վեհապետ մեթոդիկ և վարչական եղանակով անարգել կոտորում էր հարիւր հազարաւոր իր հպատակներին: Մեր գեսալանը, պ. Պոլ Կամբոն,

պատմութեան մէջ չլսուած այս ոճիրը հրապարակեց ֆրանսիայում։ Լորդ Սալսբըրի նոյնը ծանօթացը Անգլիային։ Պատգամաւորական պալատները յուզւեցին։ Աւաղ, հիմա միայն ևս էի մնացել վկայելու համար այս խնդրի շուրջը Պրեսանսէի, Ժորեսի, Ալբեր դը Մէօնի և իմ միջև տիրող սերտ համաձայնութեան մասին։ Հայաստանու Այդ վաղեմի մշակոյթի երկիրը, Բաքելոնի վեհապետների գաղութը, Հռովմի փառասիրութեան առարկան, փառաց քրիստոնէութեան՝ նրա արշալոյսին իսկ, խաչակիրների դղեակներով ու եկեղեցիներով լի, — Հայաստան, Պարսկաստանի հանճարն ունեցող բանաստեղծներով, և բեղուն իր հերոսներով, Միհրդատից սկսած մինչև Բագրատունին, սպանդանոցի էր վերածուած։ Տրավիզոնից, Երզրումից և Խարբերդից համանող ողբերը արձագանգեցին բոլորի սրտում, բացի Գերմանիայի կայսրից։

Նրա մտքում տարբեր գաղափար ծնուեց։ Կարելի էր օգտագործել պատիւը կորցրած հզօրներին։ պէտք էր գնալ տեսնել նրանց այն ըոպէին, երբ ամենքը շուրջ են տալիս իրենց երեսը։ այս գեսլքում նրանք երախտապարտ կը մնեն, և ինչքան մեծ լինի գարշանքը, այնքան աւելի շատ կը լինի անակնկալ մեծարանքի հաւատքից ստացւելիք շահը։

Եւ Վիլհելմ Բ. այս նպաստաւոր ըոպէից օգտւեց Աբդիւլ-Համիդին այցելելու համար։ Բայց սխալուեց իր հաշւում։ Նա կարծում էր, թէ այդ գնով կարելի էր ստանալ ամբողջ մահմեդականութեան յարգանքը։ 1898-ին Դամասկոսում, իշխան Բիլովի խօսքերով, նա յայտարարեց հանդիսաւորապէս „Երկրի երեսում գտնուող երեք հարիւր միլիոն մահմեդականները կարող են, վստահ լինել, որ Գերմանիայի կայսրը նրանց բարեկամ կը մնայ։”

Եւ բարեկամացաւ միայն Աբդիւլ-Համիդին։ Բայց նոյն իսկ այս չարաբաստիկ բարեկամին չկարողացաւ պահել նրա արիւնուած գահի վրայ։ Յաջորդները միայն լաւ խոստումներ արին։ Եւ վերսկսեցին կոտորածները երզրումում, Խարբերդում եւ Աղանայում։ Արանք Գերմանիայի ոչ թէ

բարեկամներ եղան, այլ հլու ստրուկները։ Երեք շաբաթ առաջ խոլական լրագիրները հաստատեցին, որ ութ հազար գերմանացի ինստրուկտորներ և հազար սպայ մտած են թուրք զօրախմբերի մէջ։ Լեման ֆոն Մանդերս իր սպայակոյտով (շտաբ) մասնակցում է մինիստրական ժողովին predendo una attitudine di padroni. Նաւատորմիղը բաղկանում է „Գեօրէն“ և „Բրեսլաուն-ից“ „Եաւուզ“ և „Միդիլլին“ անւան տակ, բայց գերման նուաստիներով և հրամանատարներով։

Թիւրքիան չէ, որ յայտարարում է պատերազմը, այլ
Գերմանիան։ Միայն թէ նա առջևից քշում է փաթթոցաւոր
և ֆէսաւոր թիւրքերին, հարւածները նրանց ընդունել տա-
լու համար, ինչպէս Շարլեռուայի ճակատամարտում իր
զօրքի առաջից ուղարկում էր հանքի բանւորներին գործի
հազուսաներով և բանւորական լապտերները տակաւին
ձեռքերնին բռնած։

1896 նոյեմբերի 3-ին Արդիւլ-Համիդի ոճիրները պալատում քողազերծ անելիս ես տսում էի, „Սա եւրոպական հայրենասիրութեան մի հարց է... Ամբողջ քաղաքակիրթ Եւրոպան շահագրգռւած է, որ իր տերրիտորիայի մի անկիւնում բարբարոսութիւնը դադարի իշխելուց”:

18 տարի առաջ ես ասում էի. „Ամբողջ աշխարհին յայտնի է, որ մենք դաշնակիցներ ունենք: Իրաւունք ունեմ գոնէ խօսելու մեր և ոռուների միջև հաստատւած մշտատե բարեկամութեան մասին... Ժամանակ է կոչ անեալու այդ բարեկամութեան, որովհետեւ նա չի կարող աւելի պատեհ առիթ գտնել Նւիրագործուելու համար:

„Ֆրանսիայի բարեկամութիւնը թանկագին է, նա հաւատարիմ է, նա արժանի է, որ կապւեն նրան։ Այսուհետեւ Բայց Ֆրանսիայի բարեկամութիւնը իր պահանջներն էլ ունի։ Նրա հետ միացած պէտք է պաշտպանել տկարներին, թիւկունք կանգնել ճնշւածներին, զոհողութիւնն յանձն առնել թէկուզ միայն արդարութեան և ազատութեան սպասարկելու համար։ Ահա սրանք են Ֆրանսիայի բարեկամութիւնից ծագող պարտականութիւնները։ Պարոն մինիստր,

այս բանը յայտնեցէք մեր բարեկամներին։

Այսօր Ռուսաստանի և Ֆրանսիայի դաշնակցութիւնը զրոշմւած է ռուսի և ֆրանսիացու արիւնով։ Ներեցէք, որ իմ խօսքերն եմ յիշում, փոխանակ յիշելու այն բոլորը, ինչ խօսում էին այն ժամանակ ամենքը, որոնց կրկնողութիւնն էր, որ ես արի պալատում։ Այս, տասնեռութ տարի անց, ինձ թւում է, որ մեզ հասկացան։ Ռուսաստանը գիտէ, թէ ինչ է ֆրանսիայի բարեկամութեան արժէքը, և զիտէ նոյնպէս, թէ ինչ են նրա պարտականութիւնները։ Երբ Կայորը երեկ կոչ արեց մեզ պաշտպանելու Սերբիան, որին սպառնում էր ամբողջ գերմանական զանգւածը, երբ նա հրատարակեց իր վեհանձն կոչը Հեհաստանին, և երբ վաղը, առանց վրդովելու թիւրքերի խելակորյս գրոհից, նա լսելի կը դարձնէ Հայաստանին, Տրապիզոնից մինչև Աղանա և Ալէքսանդրեա, յունական կղզիներին և հզմիրին, ազատագրման և ազատութեան միենոյն կոչը, ինձ թւում է, թէ Ռուսաստանը կը դառնայ մեզ և կը հարցնէ. „Ֆրանսիացիներ, դժո՞ էք“։

(Հորիզոն)։

ՈԳԵԼԻՑ ՀՄՊԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ*).

2.

Ոգելից ըմպելիքների գործածութիւնը մանաւանդ օղու, տարածւում է հայ գիւղերում և լեռնային շրջաններում գործ են ածում օղին, որը թէ էժան է թէ շուտ ազդող։ Մեզ մօտ՝ ճշմարիտ է այնքան չի տարածւում ոգեմոլութիւնը, ալկոհոլիզմ, որը յայտնի հոգեբոյժ պրօֆ. Բեխտերել համարում է հիւանդութիւն, որ սարսափելի քայլայիշ հետևանք ունի թէ խմողի կազմուածքի և թէ նրա սերնդի վրայ. բայց դժբախտաբար մեզ մօտ արդէն սկսում է երեալ ալկոհոլիզմը, թէնոււազ չափով։ Հոչակառը պրօֆ. հանգուց. Զախարինը (Զախարին) տոել է. «Երբ մտածում եմ ազգային արքեցողութեան մասին, Ռուսաստանի ազագան ինձ սարսափելի է երեւում։ Վերոյիշեալ գիտական Բեխտերել իւր մէկ գրուածքում գրում է. «Համաձայն ամերիկական վիճակագրութեան երեխայ յանցաւորները ծնուել են ոգեմոլ ծնողներից՝ տալով $47^0/0$, անգլիայում $43,5^0/0$, իսկ՝ ընկնաւորներ, էպիլեպսիա. $49,5^0/0$ ։ Ալկոհո-

*) Տես Արարատ 1914, հոկտեմբեր։